ԱՆՆԱ ՕՎՉՅԱՆ
ANNA OVCHYAN

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոգեբանության մեջ երեխայի հանդեպ ընտանեկան բռնության պատճառներն ու ռիսկի գործոններն ընդունված է դիտարկել մեկ ամբողջության մեջ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ երեխայի հանդեպ բռնության կիրառման պատճառները բազմաթիվ են և բնորոշվում են տարաբնույթ գործոնների համադրությամբ, որոնցից ոչ մեկն առանձին չի կարող ընտանիքում երեխայի հանդեպ բռնության կիրառման պատճառ համարվել: Ընտանիքում երեխայի հանդեպ դաժան վերաբերմունքի ժամանակակից հետազոտությունները կառուցվում են հիմնվելով առանցքային երեք տեսական մեկնաբանությունների վրա՝ հոգեբուժական, սոցիոլոգիական և իրավիճակային: Հոգեբուժական մոդելի առանցքում ընկած է ծնողների անհատականությունը և նրանց ընտանեկան պատմությունը: Այս մոդելը ենթադրում է, որ սեփական երեխաների հանդեպ բռնություն կիրառող ծնողները ունեն հոգեբուժական օգնության կարիք: Իրավիճակային մեկնաբանության համաձայն երեխաների հանդեպ դաժան վերաբերմունքի պատճառները փնտրում է արտաքին միջավայրի գործոններում: Սոցիոլոգիական մեկնաբանության համաձայն ժամանակակից հասարակությունում երեխաների հանդեպ բռնության դեպքերի տարածվածությունը պայմանավորված է սոցիալական մի շարք գործոններով, առկա սոցիալական խաթարված արժեքներով, որոնցից մեկը՝ բռնությունն է [4, էջ-453-455]:

Ընտանիքում երեխաների հանդեպ բռնության պատճառականության հիմնախնդրին բազմակողմանիորեն անդրադառնալու համար դիտարկել ենք երեխաների հանդեպ ընտանեկան բռնությանը նպաստող ռիսկի հիմնական գործոններն, որոնց թվին են պատկանում.

ա. սոցիալ-տնտեսական գործոնները.

Ընտանիքում երեխայի հանդեպ բռնության պատճառները ուսումնասիրելիս նկատեցինք, որ կյանքի ցածր նյութական մակարդակ ունեցող ընտանիքներին բնորոշ է ծնողների՝ սննդի, հագուստի, բժշկական խնամքի ապահովման հարցում երեխայի կարիքները բավարարելու շարունակական անկարողությունը կամ, որոշ դեպքերում նաև, իրավիճակը փոխելու ցանկության բացակայությունը [1, էջ-30-33]:

Ընտանիքների պատմությունները ուսումնասիրելիս բախվեցինք մեր հասարակության մեջ մի շատ տարածված խնդրի հետ երիտասարդ ծնողների գործազրկության կամ ժամանակավոր աշխատանքի: Այդ ընտանիքներում

ցածր եկամուտը և փողի շարունակական պակասը ընտանիքի անդամների հիմնական կարիքների չբավարարելու հետ կապված մեծ հոգեկան լարվածություն են առաջացնում, ինչը արտահայտվում է ընտանիքի անդամների միջև փոխհարաբերություններում: Ընտանիքում ձևավորված անառողջ հոգեբանական մթնոլորտի պայմաններում մեծանում է երեխաների հանդեպ բռնություն գործադրելու հավանականությունը: Այսինքն, չնայած այն հանգամանքին, որ երեխայի հանդեպ բռնությունը հանդիպում է հասարակության ցանկացած շերտում, քանի որ անկայուն տնտեսական համակարգի բացասական ազդեցությանն այս կամ այն չափով ենթակա են բոլոր ընտանիքները, սակայն, նյութական անբարենպաստությունը և հատկապես ընտանիքի աղքատության շեմին գտնվելը բերում է նրան, որ երեխաների հանդեպ բռնության դեպքերը ավելի հաճախակի են, քան սոցիալապես բարենպաստ վիճակում գտնվող ընտանիքներում:

Հիմնվելով այս հիմնախնդրի մի շարք հետազոտությունների և մեր կատարած հետազոտական աշխատանքներից ստացած տվյալների վրա առանձնացնենք ռիսկի խմբում գտնվող հետևյալ ընտանիքներն ու մի շարք գործոններ.

1. *Բազմազավակ ընտանիքը*, ինչպես ցույց են տալիս մի շարք ուսումնասիրություններ զգացմունքային և նյութական մեծ ծախսեր է պահանջում ընտանիքի անդամների թե հոգեբանական և թե նյութական կարիքները ապահովելու համար: Այստեղ նյութական գործոնն կարևոր դեր ունի, իսկ նման ընտանիքների նյութական մակարդակը, որպես կանոն, բարձր չէ:

2. *Երիտասարդ ծնողների ընտանիքներում* անձի հասունության պակասը, կրթության և մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակի հետ միասին, վատթարացնում է ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանները: Նշենք, որ ծնողական զգացմունքների և հմտությունների պակասը առավել նյարդային է դարձնում երիտասարդ ծնողին և հանգեցնում է սթրեսի և դեպրեսիվ վիճակների առաջացմանը:

3. *Ոչ լիարժեք ընտանիքը* նույնպես հանդես է գալիս երեխայի հանդեպ բռնության պատճառներից մեկը: Միայն մեկ կերակրող ծնողի առկայությունը զգալիորեն վատթարացնում է ընտանիքի նյութական վիճակը: Ընտանիքում առկա ծանր, լարված իրավիճակը, կնոջ՝ ամուսնությունից և այլնից սպասելիքների արդարացված չլինելը, կարող են բացասաբար ազդել երեխայի հանդեպ վերաբերմունքի և նրա հետ փոխհարաբերությունների վրա:

4. *Կոնֆլիկտային ընտանիքներում* նույնպես մեծանում է երեխայի հանդեպ բռնության կիրառման հավանականությունը, քանի որ ընտանիքի անդամների միջև կոնֆլիկտային կամ բռնությամբ զուգորդվող հարաբերությունները հաճախ երեխաների հանդեպ դաժան վերաբերմունքի պատճառ են դառնում [3, էջ 8-21]: Որպես կանոն, երեխաների հանդեպ բռնություն կիրառող ընտանիքները

առանձնանում են ընտանիքի անդամների միջև հուզական կապվածության և հաղորդակցման խախտմամբ, ինչի արդյունքում չի ձևավորվում արդյունավետ հոգեբանական աջակցություն, որն էլ իր հերթին հանգեցնում է ընտանեկան միասնականության ցածր մակարդակին [2, էջ 15]:

5. *Սոցիալապես մեկուսացած ընտանիքները* առանձնանում են սոցիալական կապերի և շրջապատի աջակցության բացակայությամբ, հասարակության մեջ միայնությամբ, ինչն էլ հանգեցնում է ընտանիքում միջանձնային փոխհարաբերությունների հաստատման դժվարությունների: Նման ընտանիքները հաճախ ապրում են ազգականներից և ընկերներից մեկուսացած. նրանց դժվար է ընկերական հարաբերություններ պահպանել շրջապատի հետ, հաճախ չունեն այն մեկը, ում կարող էին դժվարին պահին դիմել օգնության համար: Արդյունքում՝ իրենց ցասումնն ու դժգոհությունը արտահայտում են սեփական երեխաների հետ փոխհարաբերություններում:

Նմանատիպ ընտանիքների ծնողների զգալի մասը սոցիալական հմտությունների ցածր մակարդակ են ցուցաբերում: Ընդ որում, նրանց մոտ գործում են հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ՝ հերքվում են խնդրի առկայությունը, որպեսզի չընդունվի իրենց անհրաժեշտ օգնությունը:

6. *Մամուսինների փոխհարաբերություններում որոշ խնդիրների* առկայություն սեռական անբավարարվածություն, հուզական աջակցության պակաս կամ բացակայություն և այլն, ազդում է հատկապես մոր հոգեբանական բարեկեցության վրա առաջացնելով սթրես, դեպրեսիա, նյարդային համակարգի մի շարք խնդիրներ: Մոր նման հոգեվիճակը նախ և առաջ անդրադառնում է երեխաների հետ իր փոխհարաբերությունների վրա:

7. *Խմբային փոքրամասնության պատկանելիությունը* նույնպես բարձրացնում է ընտանիքում երեխայի հանդեպ բռնության կիրառման հավանականությունը: Օրինակ որևէ կրոնական աղանդի հարելը, որտեղ գործում են որոշակի «ներքին օրենքներ» կամ մարդկանց նեղ շրջանում փոքր և հեռավոր գյուղում ապրելը, հանգեցնում են մեկուսացման և սահմանափակում աջակցության և հասարակական վերահսկողության հնարավորությունները: Վիճակը ավելի է բարդանում, եթե այդ ամենին գումարվում է գործազրկությունն ու կրթության ցածր մակարդակը [3, էջ 23-27]:

բ. Ծնողի անհատականության հետ կապված ռիսկի գործոններ:

Ծնողի անհատականության առանձնահատկությունները՝ մտավոր հետամնացությունը և հոգեկան առողջությունը, առողջության հետ կապված մի շարք այլ խնդիրներ, ծնողներից մեկի կամ երկուսի արբեցողությունը և թմրամոլությունը և դրանից բխող հոգեֆարմակոլոգիական խնդիրները և աֆեկտային խախտումները՝ ագրեսիվությունը, հիպերսեքսուալությունը, դյուրագրգռությունը, սեփական վարքը վերահսկելու թուլությունը, քննադատական վերա-

բերմունքի նվազումը, անձնային և բնավորության հետ կապված առանձնահատկությունները, ցածր ինքնագնահատականը, դեպրեսիվությունը, իմպուլսիվությունը, կախվածությունը, էմպատիայի (ապրումակցման), սթրեսի հանդեպ ցածր դիմադրողականությունը, ագրեսիվությունը, ներամփոփվածությունը, կասկածամտությունը անհատականության փոփոխությունները և այլ խնդիրներ, նման միջավայրում ապրող երեխաների համար հսկայական ռիսկեր են ստեղծում: Ինչպես ցույց են տալիս ընտանիքում երեխայի հանդեպ բռնության հիմնախնդրի մի շարք ուսումնասիրություններ սթրեսը, ֆրուստրացիան նույնպես դառնում են երեխայի հանդեպ մեծահասակի ագրեսիայի նախադրյալ: Այս հոգեվիճակում հայտնված ծնողի անօգնական վիճակը ազդում է ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա և մեծանում երեխայի «քավության նոխազ» դառնալու ռիսկը [1. էջ 34-41]:

Շատ հաճախ, մանկության տարիներին բռնության ենթարկված ծնողները կրկնում են վարքի այն նույն մոդելը, որը տեսել են իրենց ծնողների կողմից՝ խիստ և տարիքին անհամապատասխան պահանջներ ներկայացնում իրենց երեխաներին, ֆիզիկական պատիժը համարում դաստիարակության միակ միջոց [2. էջ 77-80]:

գ. Երեխայի անհատականությունը որպես բռնության գործոն:

Մի շարք հետազոտություններ ցույց են տվել, որ երեխայի անհատականության որոշ առանձնահատկություններ, որոնք ծնողի մոտ դժգոհություն, նյարդայնություն են առաջացնում, հանգեցնում են բռնության: Այս խնդրի մի շարք հետազոտողներ (Լինչը , Սթրաուսը, Միխայլովան, Զինովյևան, Վոլկովան) գտնում են, որ բռնության զոհ դառնալու ռիսկը բարձր է հատկապես հոգեկան և ֆիզիկական հետևյալ առանձնահատկություններ ունեցող երեխաների մոտ անցանկալի երեխաներ, փոքր քաշ ունեցած վաղածին երեխաներ, բազմազավակ ընտանիքում ապրող երեխաներ, ուր երեխաների ծննդյան միջև ընկած ժամանակահատվածը մեծ չէ, բնածին կամ ձեռքբերովի արատներով, մտավոր հետամնացությամբ, առողջական այլ խնդիրներով տառապող երեխաներ, հոգեկան շեղումներով երեխաներ, վարքային խանգարումներով երեխաներ (դյուրագրգռություն, իմպուլսիվություն, հիպերակտիվություն, վարքի անկանխատեսելիություն, երեխայի քնի խանգարումներ, էնուրեզ), երեխայի անհատականության որոշակի առանձնահատկություններ (չափից դուրս պահանջկոտություն, ինքնամփոփություն, անտարբերություն կամ խիստ կախվածություն ծնողից), ծնողներին նյարդայնացնող սովորություններով երեխաներ, սոցիալական ցածր հմտություններ ունեցող երեխաներ; երեխաներ, որոնցով հղիությունը կամ ծնունդը բարդություններով է ընթացել, կամ երեխաներ, որոնք կյանքի առաջին տարվա ընթացքում հաճախ են հիվանդացել, մորից երկար ժամանակահատվածով բաժանված երեխաներ [1, էջ 106-120]:

Ընտանիքում երեխաների հանդեպ կիրառվող բռնությանը նպաստում են նաև մի շարք այլ սոցիալ-մշակութային բնույթի գործոններ: Մեր հետազոտությունների ընթացքում նկատեցինք մեր հասարակության մեջ ընդունված դաստիարակության մի ձև այն, որ հաճախ ծնողը երեխայի հանդեպ ֆիզիկական պատիժ է կիրառում նրան կարգապահության ենթարկելու, անցանկալի կամ հավանության չարժանացող վարքի փոփոխության կամ վերացման նպատակով: Ծնողներից ստացված տեղեկությունները հաստատում են, որ շատ հաճախ ֆիզիկական պատիժը մեր մշակույթում (ապտակը, վզակոթին հարվածելը, գոտիով հարվածելը) համարվում են դաստիարակության տարածված և բնական ձև և չեն դիտարկվում որպես բռնություն:

Որոշ ծնողներ, վախենալով կորցնել երեխայի հանդեպ վերահսկողությունը, հաճախ դիմում են դաստիարակության ավտորիտար մեթոդի, իսկ պատիժը դիտարկում որպես երեխայի վարքի կարգավորման եղանակ: Հաճախ այս հանգամանքը պայմանավորված է լինում դաստիարակության այլ ոճերի մասին գիտելիքների բացակայությամբ: Նրանք վստահ են, որ երեխան ծնողների հուզական կարիքների բավարարման համար է և պետք է լինի լսող, ծնողների հանդեպ ուշադիր, քնքուշ, հասկացող, չվշտացնի նրանց, սիրի և միայն ուրախություն պատճառի [2, էջ 81]:

Այսպիսով, երեխայի հանդեպ բռնությունը պետք է դիտարկել սոցիալ-մշակութային և հոգեբանական համատեքստում, որը պետք է հաշվի առնել ընտանիքում երեխայի հանդեպ բռնության բացահայտման, կանխարգելման գործընթացի և այլ միջամտությունների ընթացքում: Անդրադառնալով վերը նշվածին, պարզ է դառնում այն, որ ընտանիքում երեխայի հանդեպ բռնության հանգեցնում է միջավայրի, ընտանիքի և անհատականության մակարդակներում առկա գործոնների համալիր ազդեցությունը և ոչ թե մեկ առանձին գործոն:

Գրականության ցանկ

1. Волкова Е. Н. / Защита детей от жестокого обращения. – СПб.: Питер, 2007-256 с.
2. Волкова Е.Н. / Проблемы насилия над детьми и пути их преодоления. СПб.:П, 2008.-240с.
3. Зиновьева Н.О., Михайлова Н.Ф./ Психология и психотерапия насилия. Ребенок в кризисной ситуации. -СПб.: Речь, 2003-248с.
4. Целуйко В. М./ Психологические проблемы современной семьи. Екатеринбург: У-Фактория, 2007- 496 с.

The causes of domestic violence against children

This article presents the causes and risk factors of domestic violence against the children. Summing up the above, it should be noted that violence against children must be considered in socio-cultural and psychological context. Thus, only the complex influence of existing levels of environment, family and personality factors leads to domestic violence against children.